ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2141-Ա « 27 » ապրիլի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-Ի Հ.2103-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 16.04.2026թ. հ.20-Ել-22074 եզրակացությունը, ինչպես նաև քաղաքացի Արտուշ Մինասյանի 14.01.2026թ. հ.Դ-3072-26 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի ապրիլի 6-ի «Արին-Բերդի փողոցի 2-րդ նրբանցքի հ.96/1 բնակելի տան նկատմամբ Մանուշակ Սաֆարաստի Կարախանյանի գույքային իրավունքները վերականգնելու, 269.37քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.2103-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով, հետևյալ խմբագրությամբ.

«1.1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա Երևան քաղաքի Արին Բերդի փողոցի 2-րդ նրբանցք հ.96/1 հասցեում գտնվող 569.37 քառ.մետր մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները սահմանել բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման:».

2) Որոշման վերնագրում, նախաբանում, 1-ին, 2-րդ և 8-րդ կետերում՝ «Մանուշակ Սաֆարաստի Կարախանյանի» բառերը փոխարինել «Արտուշ Մուշեղի Մինասյանի» բառերով.

3) Որոշման նախաբանում՝ «Մանուշակ Սաֆարաստի Կարախանյանի (ծնված 00.00.1921թ.)» բառերը փոխարինել «Արտուշ Մուշեղի Մինասյանի (ծնված 30.01.1957թ.)» բառերով.

4) Որոշման 3-րդ կետում՝ «քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետին» բառերը փոխարինել «քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

4.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ